

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ծառայությունների սակագները և դրույքաչափերը

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ կարևորում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ իր հաճախորդների լիարժեք տեղեկացվածությունը: Ստորև ներկայացվող Ամփոփագրում հստակ նշված են **ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ** կողմից առաջարկվող ծառայությունների սակագները, ինչպես նաև պարունակում է անհրաժեշտ տեղեկատվություն, որը Ձեզ կօգնի կողմնորոշվել և կայացնել ճիշտ որոշումներ:

Ցանկացած գործարք կատարելուց կամ բանկային ծառայություն ստանալուց առաջ հանգամանորեն ծանոթացեք Ձեզ անհրաժեշտ տեղեկատվությանը, իսկ պարզաբանումների անհրաժեշտության դեպքում դիմեք մեր մասնագետներին:

Ամփոփագրի վերջին փոփոխությունը կատարվել է 02.07.2019թ.-ին:

Բանկի կողմից մատուցվող ծառայությունների մասին առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք այցելել ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ պաշտոնական կայքէջ www.araratbank.am, կամ գրել մեզ araratbank@araratbank.am էլեկտրոնային հասցեով:

Կարող եք զանգահարել նաև ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ հեռախոսային կենտրոն՝ (010) 59 23 23 շուրջօրյա հեռախոսահամարով:

- 1.** Հաճախորդի կողմից բանկային հաշվի պայմանագրի կամ որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի ստորագրումը հաստատում է սույն սակագների և դրույքաչափերի, ինչպես նաև ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:
- 2.** Ծառայությունների սակագները և դրույքաչափերը (այսուհետ՝ Սակագներ) կարող են փոփոխվել Բանկի կողմից միակողմանի կարգով՝ այդ մասին նախապես ինտերնետում (բանկի պաշտոնական կայքում) կամ այլ հրապարակային աղբյուրներում, և/կամ Բանկի տարածքում՝ հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:
- 3.** Սակագները սահմանված են ՀՀ դրամով իսկ արտարժույթով գործառնությունների տոկոսով սահմանված սակագները հաշվարկվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող տվյալ օրվա արժույթային շուկայում ձևավորվող միջին փոխարժեքով:
- 4.** Սույն սակագներով չսահմանված դեպքերում, գործարքների պայմանները որոշվում են առանձին պայմանագրերով կամ Բանկի այլ ներքին իրավական ակտերով:
- 5.** ԱԱՀ-ով հարկվող գործարքների սակագները ներառում են ավելացված արժեքի հարկը, ինչի վերաբերյալ սակագներում առանձին նշում է կատարված:
- 6.** Միջնորդավճարներն անվիճելի կարգով ելքագրվում են հաշվետերերի հաշիվներից, եթե այլ բան սահմանված չէ Բանկի և հաշվետիրոջ միջև կնքված պայմանագրերով:
- 7.** Առանձին դեպքերում Բանկի վարչության որոշմամբ Բանկի և հաշվետերերի միջև կնքվող պայմանագրերով կարող են սահմանվել այլ սակագներ:
- 8.** Սակագների փոփոխությունները, այդ թվում որոշակի ժամկետում այլ սակագնի կիրառումը, կատարվում են Բանկի վարչության որոշումներով:
- 9.** Բանկը պատասխանատվություն չի կրում՝
 - ա)** հաճախորդի ոչ ճիշտ ցուցումների,
 - բ)** իր տարածքից դուրս կապի միջոցների անսարքությունների,
 - գ)** անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, համաճարակներ, գործադուլներ, շրջափակումներ, ռազմական և արտակարգ դրություն, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, պետական մարմինների ակտեր և այլն) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

Ինտերնետ-բանկ համակարգ

Խուսափե՛ք սպասարկման սրահում հնարավոր հերթից կամ ճանապարհների խցանումներից՝ խնայելով ձեր ժամանակը:

Պատճառներ, որոնք կհիմնավորեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ ՀԾ-Ինտերնետ Բանկ համակարգից օգտվելու Ձեր ընտրությունը.

- անվտանգ է,
- արագ է, պարզ և հարմար օգտագործելիս,
- թույլ է տալիս ձեր բոլոր բանկային գործարքներն իրականացնել 24/7 ռեժիմով ձեզ համար հարմարավետ վայրից՝ աշխատավայրից կամ տանից:

Օգտագործելով մեր հեռահար սպասարկման հնարավորությունը, առանց բանկ այցելելու **ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ.**

Դիտել ձեր հաշիվները	Կատարել ձեր հաշիվները	Հաղորդակցվել բանկի հետ
Դիտել ընթացիկ և քարտային հաշիվների մնացորդները, մուտքերն ու իրականացրած գործարքները	Կատարել փոխանցումներ ՀՀ տարածքում	Ուղարկել բանկին հաղորդագրություններ և կից ֆայլեր
Դիտել վարկերի մնացորդները և մարման ժամանակացույցը	Կատարել միջազգային փոխանցումներ	Ստանալ բանկից հաղորդագրություններ
Դիտել ավանդների մնացորդներն ու կուտակված տոկոսները	Կատարել արտարժույթի փոխանակումներ	Ներմուծել տվյալներ
Դիտել արտարժույթային և ոսկու փոխարժեքները	Կատարել վարկի մարում	Ստեղծել փաստաթղթերի ձևանմուշներ
Դիտել ընթացիկ կոմունալ պարտքերը	Իրականացնել ավանդի բացում/համալրում	
	Կատարել կոմունալ վճարումներ	
	Կատարել բյուջետային փոխանցումներ	
	Ուղարկել կանխիկացման հայտեր	

Տրամադրման պայմաններ ֆիզիկական անձանց

	Ֆիզիկական անձ	
	Ռեզիդենտ	Ոչ ռեզիդենտ
Ինտերնետ-բանկ համակարգի տրամադրման վճար	1,000.00 ՀՀ դրամ (միանվագ)	5,000.00 ՀՀ դրամ (միանվագ)
Ինտերնետ-բանկ համակարգի ամսական սպասարկման վարձ	0.00 ՀՀ դրամ	0.00 ՀՀ դրամ
SMS հաղորդագրության ուղարկում	10.00 ՀՀ դրամ* / 30.00 ՀՀ դրամ**	

Ծանուցում.

Սակագների մեջ ներառված է ԱԱՀ:

* դեպի ՀՀ տարածքում գրանցված բջջային օպերատորների ցանց:

** դեպի ՀՀ տարածքից դուրս գրանցված բջջային օպերատորների ցանց:

Տրամադրման պայմաններ իրավաբանական անձանց և ԱԶ-ների համար

	Անհատ ձեռներեց	Իրավաբան. անձ
Առանց Էլեկտրոնային ստորագրության հնարավորության DIGIPASS GO 1 հատ սարքի տրամադրում	Անվճար	Անվճար
«ՀԾ ինտերնետ Բանկ» և «Մոբայլ Բանկինգ» ամսական սպասարկման վարձ DIGIPASS GO սարքի տրամադրման դեպքում	1100 ՀՀ դրամ	4000 ՀՀ դրամ
«ՀԾ ինտերնետ Բանկ» և «Մոբայլ Բանկինգ» ամսական սպասարկման վարձ լրացուցիչ յուրաքանչյուր 1 հատ DIGIPASS GO սարքի տրամադրման դեպքում	700 ՀՀ դրամ	1500 ՀՀ դրամ
Էլեկտրոնային ստորագրության հնարավորությամբ DIGIPASS 260 1 հատ սարքի տրամադրում	Անվճար	Անվճար
«ՀԾ ինտերնետ Բանկ» և «Մոբայլ Բանկինգ» ամսական սպասարկման վարձ DIGIPASS 260 սարքի տրամադրման դեպքում	1300 ՀՀ դրամ	4500 ՀՀ դրամ
«ՀԾ ինտերնետ Բանկ» և «Մոբայլ Բանկինգ» ամսական սպասարկման վարձ լրացուցիչ յուրաքանչյուր 1 հատ DIGIPASS 260 սարքի տրամադրման դեպքում	700 ՀՀ դրամ	1500 ՀՀ դրամ
DIGIPASS GO սարքի կորստի դեպքում նոր սարքի տրամադրում	6000 ՀՀ դրամ	6000 ՀՀ դրամ
DIGIPASS 260 սարքի կորստի դեպքում նոր սարքի տրամադրում	7000 ՀՀ դրամ	7000 ՀՀ դրամ
Առանց սարքի տրամադրման հաշիվների դիտում	Անվճար	Անվճար

ԱՐԱՐԱՏՄՈՒԲԱՅԼ ԲՋՋԱՅԻՆ ԿԱՎԵԼՎԱԾ

Ներբեռնել ք ԱՐԱՐԱՏՄՈՒԲԱՅԼ ԲՋՋԱՅԻՆ ԿԱՎԵԼՎԱԾը և կառավարել ք Ձեր բոլոր բանկային գործարքները բջջային հեռախոսի միջոցով աշխարհի ցանկացած կետում՝ ունենալով միայն սմարթֆոն և հասանելիություն ինտերնետին:

Հավելվածի միջոցով Դուք կարող եք 24/7 արագ և ապահով կառավարել Ձեր բանկային գործարքները առանց բանկ այցելելու՝ ձեռք բերելով օնլայն բանկինգի անզուգական փորձ:

ԱՐԱՐԱՏՄՈՒԲԱՅԼ՝ *պարզ լուծում առօրյա խնդիրներին*

Հավելվածից օգտվելու համար ներբեռնեք այն Google Play և/կամ App Store խանութներից:

Հավելվածի միջոցով Դուք կարող եք.

ԱՐԱՐԱՏՄՈՒԲԱՅԼ հավելվածը կօգնի ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց և անհատ ձեռներեցներին խնայել ժամանակ բազմաթիվ բանկային գործարքների իրականացման համար.

- քարտից քարտ փոխանցումներ
- փոխանցումներ ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս
- արտարժույթայի փոխարկումներ
- պլաստիկ քարտ թողարկելու կամ վերաթողարկելու պատվեր
- կորցված և/կամ գողացված քարտի մասին տեղեկացում
- կոմունալ և ՃՈ վճարումներ
- ավանդի ներդրում/համալրում
- վարկի մարումներ և այլ:

Որտեղ էլ որ լինեք, Դուք կարող եք ոչ միայն իրականացնել գործարքներ, այլ նաև դիտել իրականացրած բոլոր գործարքները բանկային, քարտային, վարկային կամ ավանդային հաշիվներով, վերլուծել կատարած ծախսերը:

ԱՐԱՐԱՏՄՈՒԲԱՅԼ գործարքների անվտանգությունն ապահովված է անվտանգության ապահովման նորագույն տեխնոլոգիաներով:

Ի դեպ՝ ԱՐԱՐԱՏՄՈՒԲԱՅԼ հավելվածը կարող են ներբեռնել ոչ միայն բանկի գործող հաճախորդները, այլ նաև քաղաքացիներ, ովքեր չունենալով ԱՐԱՐԱՐՏՄՈՒԲԱՅԼ-ում հաշիվ, ցանկանում են իրականացնել օնլայն կոմունալ վճարումներ, դիտել օրվա փոխարժեքը կամ փոխարժեքների պատմությունը, օնլայն նախնական հայտեր ներկայացնել բանկի ծառայությունների համար, տեսնել մոտակա բանկոմատների կամ մասնաճյուղերի վերաբերյալ տեղեկատվություն և այլն:

Ինչպես օգտվել հավելվածից

Հավելվածից օգտվելու համար անհրաժեշտ է ներկայացնել դիմում-հայտ՝ այցելելով Բանկի Գլխամասային գրասենյակ կամ լրիվ գործառնություններ իրականացնող մասնաճյուղ:

Հավելվածն օգտագործելու համար սարք ձեռք բերելու անհրաժեշտություն չկա, քանի որ հավելվածն աշխատում է առանց տոկենի:

ԱՐԱՐԱՏՄոբայլ հավելվածի սպասարկման սակագներ

	Ռեզիդենտ	Ոչ ռեզիդենտ
«ԱՐԱՐԱՏՄոբայլ Բանկինգ» տրամադրման վճար	0 ՀՀ դրամ	5000 ՀՀ դրամ (միանվագ)
«ԱՐԱՐԱՏՄոբայլ Բանկինգ» ամսական սպասարկման վարձ	0 ՀՀ դրամ	0 ՀՀ դրամ
SMS հաղորդագրության ուղարկում	0.00 ՀՀ դրամ* / 30.00 ՀՀ դրամ**	

Ուշադրություն. Սակագների մեջ ներառված է Ա.Ա.Հ:

*դեպի ՀՀ տարածքում գրանցված բջջային օպերատորների ցանց

** դեպի ՀՀ տարածքից դուրս գրանցված բջջային օպերատորների ցանց

ASG բջջային հավելված

ASG (ARARATBANK SERVICE GUIDE) բջջային հավելվածը ստեղծված է մարդկանց առօրյան դարձնելու առավել պարզ և հարմար: Այն հանդիսանում է խորհրդատվական, ուղղորդող համակարգ և հնարավորություն է տալիս նախապես ամրագրել հերթ Բանկի մասնաճյուղում՝ ստանալով մասնաճյուղի ուղղորդումը քարտեզի միջոցով: Հավելվածը նախատեսված է բոլորի համար և չունի գրանցման անհրաժեշտություն: Հավելվածից օգտվելու համար ներբեռնեք այն Google Play և/կամ App Store խանութներից:

Հավելվածի միջոցով Դուք կարող եք.

- Ընտրել մոտակա մասնաճյուղը. համակարգը քարտեզի վրա գծում է Ձեր գտնվելու վայրից մինչև մասնաճյուղ ընկած ճանապարհահատվածը և տրամադր դրա հեռավորությունը: Հավելվածի միջոցով կարող եք ընտրել Ձեզ մոտ գտնվող 3 մասնաճյուղերը: Ավելին՝ կարող եք տեսնել նաև նշված 3 մասնաճյուղերից մինչև Ձեր գտնվելու վայրը տեղակայված բոլոր բանկոմատներն ու տերմինալները:
- Ընտրել այցելության ժամը. Դուք հնարավորություն ունեք մինչև 5 րոպե և 10 րոպեից սկսած ցանկացած աշխատանքային օր ու ժամի ընտրություն՝ մասնաճյուղ այցելելու համար:

- Ամրագրել հերթ մասնաճյուղում. Այս ծառայության միջոցով Դուք կարող եք ամրագրել հերթեր Բանկի մասնաճյուղերում
- Պատվիրել գանգ. Նշելով Ձեր հեռախոսահամարը՝ մեր մասնագետները Ձեզ հետ կապ կհաստատեն:
- Ուղարկել և ստանալ հաղորդագրություններ 24/7. Հավելվածի միջոցով կարող եք ուղարկել Բանկին հաղորդագրություններ 24/7 և ստանալ պատասխաններ:

Ուշադրություն. Միայն «կանխիկացում» ծառայության ընտրության դեպքում անհրաժեշտ է մուտքագրել կանխիկացվող գումարի չափը և արժույթը՝ մասնաճյուղում տվյալ քանակի գումարի առկայության ճշտման նպատակով:

Հավելվածից օգտվելու համար անհրաժեշտ է.

- Ինտերնետի առկայություն
- Տեղի որոշման թույլտվություն (location)
- Հաղորդագրությունների ուղարկման թույլտվություն

ԱՐԱՐԱՏ-Դիվինգ

ԱՐԱՐԱՏ-ԴԻԼԻՆԳՆ առևտրատեղեկատվական ժամանակակից համակարգ է՝ նախատեսված բանկի ծրագրային ապահովմամբ էլեկտրոնային փաստաթղթերի ձևավորման և փոխանակման համար, որոնք կապահովեն հաճախորդի և բանկի միջև փոխարկային արժույթային գործարքների կնքումը: ԱՐԱՐԱՏ-ԴԻԼԻՆԳԸ բարձր պաշտպանվածությամբ ինտերնետ կապի հիման վրա ստեղծված համակարգ է, որը ծրագրավորվել է պրոֆեսիոնալների հատուկ թիմի կողմից:

ԱՐԱՐԱՏ-ԴԻԼԻՆԳԸ ֆինանսական շուկայի բոլոր մասնակիցներին հնարավորություն է տալիս անկախ գտնվելու վայրից, առանց ժամանակի կորստի համակարգչով կամ ուղղակի բջջային հեռախոսով իրականացնել արտարժույթի առք ու վաճառքի ցանկացած գործառնություն ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ կողմից սահմանված գնանշումների հիման վրա՝ բանկում գործող ՀՀ դրամով և արտարժույթով հաշիվների մնացորդների սահմաններում:

ԱՐԱՐԱՏ ԴԻԼԻՆԳ համակարգ կարող էք մուտք գործել հետևյալ www.araratbank.am ինտերնետային կայքում ներկայացված հղմամբ:

Առավելությունները

ԱՐԱՐԱՏ-ԴԻԼԻՆԳ բազմաֆունկցիոնալ համակարգն իր բոլոր հաճախորդներին առաջարկում է մրցակցային փոխարժեքներ, ինչպես նաև հնարավորություն՝ ծանոթանալու ֆինանսական նորությունների, էլեկտրոնային գործիքների միջոցով աշխատել ԱՐԱՐԱՏ-ԴԻԼԻՆԳ համակարգին միացած այլ հաճախորդների հետ: